

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆԸ

Փետրուարի 13-ին նաւաւիւր քաղաքին մէջ,—որ է Ամասյուր կամ Նախոյի-սի-Ռոմանիա ըսուածը,—խռովութիւն մը ելաւ, որոյ պատճառն էր Յունաց մէկ մասին իրենց այժմու կառավարութենէն տժգոյի լինելը: Զօրաց մէկ մասն ալ քա-

ղաքացւոց հետ միանալով՝ խռովութիւնը մեծցաւ ու տարածուեցաւ նաեւ Արգոս եւ Կորնթոս: Ամէնքին մէջ հանդարտութիւն է, բայց այն տեղըն ալ շատ մարդիկ բռնուեցին՝ բանտ դրուեցին: Տէրութիւնը որոշեց է որ զէնքով նուաճէ այս խռովութիւնը, եւ շատ զօրք յուղարկեց է նաւաւիւրացւոց վրայ: — Գաղղիոյ լրագիրները կերելի



Արեւք.

Թէ չափազանց կմեծցնեն Յունաստանի այս նոր խռովութեան պարագաները, բայց Վեննայի լրագիրներն ալ չափէ դուրս կ'ազդտիկցնեն. ասով ալ կիմացուի Թէ Աւստրիան ամենեւին չախորժիր

եւրոպական ճաճկաստանի քրիստոնէից շարժմունքներէն, եւ պատրաստ է նաեւ օգնելու Օսմանցւոց որ ժամ մը առաջ յաղթեն իրենց դէմ ելած քրիստոնէից:

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք.

ԳԵՂԵՅՅԻ ՕՐԻՆԱԿ.

Փրակա քաղաքը չուր կոխելով՝ մեծամեծ վնասներ եղան: Մէկէն հարուստ մարդիկ բարեպաշտութեամբ յանձնաժողով կազմեցին ստակ ժողովելու, խեղճ աղքատաց օգնելու: Փրակայի բանտին մէջի բանտարկեալները այս բանս լսելով՝ իրենք եւս վառեցան եղբայրսիրութեամբ, ու ամէն մէկը բերնէն կտրած ու խնայութեամբ ժողոված քիչ մը ստակը սիրով նուիրեց յօգուտ աղքատաց. բոլորը մէկտեղ եղաւ 179 ֆիորին: Ցանձնաժողովը սիրով ընդունեցաւ այն թշուառ բանտարկելոց սրտառու շուէրը, ու շնորհակալութեան փառաւոր նամակ մը գրեց առ նոսա:

ԳԱՂՂԻՈՅ ԲՆԱԿԶԱՅ ԳԱՍՏԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ.

Գաղղիոյ վերջին աշխարհագրովը հետեւեալ հաշիւն եղեր է.

Գաղղիոյ բոլոր բնակիչն է	37,382,235	ճողի
Այր մարդիկ	18,642,504	—
Կին մարդիկ	18,739,721	—
Ձկարգուած երիտասարդք	10,210,756	—
Օրիորդք	9,487,541	—
Արք ամուսնացեալք	7,503,024	—
Կանայք ամուսնացեալք	7,437,115	—
Այրի մարդիկ	728,724	—
Այրի կնիկմարդիկ	1,795,065	—